

ԿՕՐԿ ՏԷՆԵՍՐՆ

Դ Օ Ր Ա

TO YAYA

**Ա**զարակի մէջ ապրում են մէկտեղ  
 Ծերուկ Ալանը , Վիլեամն ու Գօրան :  
 Վիլեամը՝ որդին , իսկ Գօրան՝ եղբոր  
 Ազգիկը միակ : Յաճախ է նայել  
 Ծերուկին նոցա եւ յաճախ խորհել  
 Ինքը իւր համար . « Կ'ուզէի նոցա  
 Մարդ ու կին անել : » Գօրան էլ այժմ  
 Բզզում է միակ տենչը հորեղբոր  
 Ամէն բանի մէջ եւ սրտի խորքից  
 Վիլեամին ձրգտում : Սակայն պատանին  
 Որովհետեւ միշտ տեսել է նորան  
 Նոյն յարկի տակին , մտքովն իսկ անգամ  
 Չէ էլ անցրել առնել Գօրային :

Բայց հասաւ մի օր , երբ ծեր Ալանը  
 Կանչեց իւր որդուն եւ ասաց նորան .  
 « Որդիս , շատ ուշ եմ ինքքս պըսակուել ,  
 Սակայն ուզում եմ թողնելքս տեսնել  
 Թառած ճակներիս՝ քանի չեմ մեռել .  
 եւ բոլոր յոյսըս մի ամուսնութեան  
 Մէջ եմ դըրել ես : եւ այդ պատճառով  
 Այժմ աւելի դիտիր Գօրային .  
 Նայելու արժան արարած է նա ,  
 եւ իւր տարիքից շատ տնտես , խոհեմ :  
 եղբորս աղջիկն է : Իւր հայրը եւ ես  
 Մի անգամ կրճու խօսքեր ասացինք  
 Իրար երեսի , թողեց հեռացաւ .  
 եւ օտար երկրում վախճանը գրտաւ :  
 Սակայն դէպ իրեն տածած իմ սիրոյս  
 Փոխարէն նորա աղջկան՝ Գօրային  
 Խընամք տարայ ես : Բեզ կին առ նորան :  
 Վաղուց է , վաղուց , երկար տարիներ ,  
 Գիշեր ու ցերեկ , այդ ամուսնութեան  
 Մասին եմ խորհում » :

Վիլեամը սակայն  
 Խօսքը կարճ կապեց . « Չեմ հարող երբէք  
 Գօրային առնել : Արեւը վկայ ,  
 Ասում եմ , Գօրան ինձ կին չի լինիլ : »

Ծերը բարկացաւ , ձեռքերը ծայց  
 եւ ասաց որդուն . « Չե՞ս ուզում , տըվա՛ս ,  
 Ա՛յդ ես պատասխան տալիս ինձ հիմա :  
 Մեր ժամանակը հօր խօսքը սակայն  
 Օրէնք էր , գիտե՛ս . ուստի ուզում եմ  
 Որ այդպէս լինի հիմա ինձ համար :  
 Լաւ նայիր , տե՛ս , հա . լաւ խորհիր , Վիլեամ ,  
 Մի ամիս ամբողջ ժամանակ կը տամ  
 Խորհելու համար . խորհիր եւ կամքիս  
 Համաձայն ինձ կամ պատասխան կը տաս  
 Կամ ինձ ըստեղծող Աստուածը վըկայ  
 Կ'առնես բարկ ու բուրկդ . եւ երբէք Չըւաքդ  
 Դուռըս չի տեսնիլ : » Սակայն Վիլեամը  
 Գըժուածի նման պատասխան տըւաւ :  
 Կրծեց շրթները , թողեց հեռացաւ :  
 Որքան աւելի էր նայում ներան ,  
 Այնքան աւելի էր ներան ատում .  
 եւ իւր վարժուքը խիտտ , դաժան դարձաւ .  
 Բայց Գօրան հըլու տանոււմ էր բոլորն :  
 Ամիսը դեռ իսկ չէր էր լըրացել ,  
 Որ իւր հայրական տընից հեռացաւ ,  
 Մըշակ վարձուեցաւ դաշտային գործու .  
 եւ մասամբ սիրուց , մասամբ զայրոյթից  
 Գընաւ-գալ արաւ եւ ամուսնացաւ  
 Մի երկրագործի աղջկայ՝ Մարի  
 Մօրիսոնի հետ :

եւ երբ զանգակի  
 Ձայնը ծերուկի ականջին հասաւ ,  
 Կանչեց Ալանը եղբորն աղջկանն .  
 « Գիտե՛ս , աղջիկս , ծերն ասաց նորան ,  
 Բեզ շատ եմ սիրում . բայց թէ որ երբէք  
 Խօսքի քըռնուես նորա հետ , որ իմ  
 Որդի էր կոչուում : կամ թէ մի բառ իսկ  
 Գու փոխանակես , նորա հետ , որին  
 Իւր կինն է կոչում , իմ տունն այլեւըս  
 Բեզ տուն չի լինիլ : Կամքքս օրէնք է » :  
 Խոնարհ էր Գօրան , խոստացաւ եւ այդ ,  
 Բայց մըտածոււմ էր . « Անհընար բան է .  
 Հօրեղբորս միտքը կը փոխուի շուտով ,  
 Այդպէս չի մընալ » : եւ օրերն անցան  
 Օրերի վերայ , շուտով Վիլեամը

Որդի ռուեցաւ . կեանքի ներուժիւնն էլ Ֆասաւ շուտով : Եւ նա ամէն օր Խորտակուած սրտով անցնում էր իւր հոր Գրուան առաջից , սակայն իւր Ֆայրը երբէք օգնութեան չը Ֆասաւ նորան : Բայց Գորան միշտ էլ , որքան կարող էր , Մի բան տնտեսած , — Թէեւ Ննչին բան , — Ուրիշ ծեռքով՝ գաղտնի ամենքից նոցա էր զրկում , որ նոյն իսկ նոքա Զիմանան ըննաւ ո՞վ է ուղարկողն . Մինչեւ որ ջերմը բռնեց Վիլեամին Հընձի ժամանակ եւ տարաւ նորան :

Եւ եկաւ Գորան Մարեամի տունը : Մարեամը նստած արցունք էր թափում իւր որդու գլխին եւ դառն մտքեր Անցնում իւր մտքով Գորայի մասին : Մտտեցաւ Գորան եւ ասաց . « Գիտե՛ս , Մինչեւ այժմ ես հընազանդ եղայ Հօրեղօօրս կամբին , բայց մեղք գործեցի . եւ այդ պատճառով Վիլեամի գրկին եկած փորձանքը դառն կակիծ է Գործել ինձ համար ամենից առաջ : Բայց այժմ , Մարօ , ի սէր նորա որ Մեզինց հեռացաւ , ի սէր քո որին նա իւր կին ընտրեց եւ ի սէր այս լսեղն Որք մընացածի , ես եկայ քեզ մտ : Դու շատ լաւ գիտես , այս հինգ տարուայ մէջ Հունձը քաւական առատ չէ եղել . Թող առնեմ փոքրին , դընձի հօրեղօօրս Աչքի առաջին , հնձուղը արտի մէջ , երբ այժմ նորա սիրտը ուրախ է Արտիի առատ հընձի պատճառով . Կարող է տեսնել նա այս ինդն փոքրին եւ օրհնել նորան , ի սէր նորա որ Մեզինց հեռացաւ :

Եւ առաւ Գորան

Վիլեամի որդուն եւ բռնեց արտը Ցանող Ցանապարհն . նստեց չը ցանած Մի բլրի վերայ , ուր որ բազմաթիւ Պուտեր էր բուսած : Եւ անհ հեռուից Գալիս է դաշտի միջով հօրեղօօրս , Սակայն չէ տեսնում նստած Գորային : Եւ հնձուրներից ոչ մէկը նորան Չէ համարձակուում , ասել Թէ այնտեղ նստած է Գորան , փօքրիկ որրի հետ : Եւ Գորան շանք է թափում ենձուլ իւր նստած տեղից եւ առաջ գնալ Դէպի հօրեղօօրս , բայց սիրտը նըւալ՝ Մընում է տեղը . եւ հնձուրները

Հնձում են արտերն , եւ արեգակը Թեքում է , գընում , ու ըրնուժիւնն ամբողջ Պատուում է խաւար քողով գիշերուայ :

Բայց երբ առաւօտն նորից լուսացաւ , Ելաւ նա տնից , դարձեալ մի անգամ , Առաւ փոքրիկին եւ նստեց հետը Բլլրակի գրկին . քաղեց եւ փընջեց Զորս կողմը բուսած բոլոր ծաղիկներն եւ պըսակ հիւսեց ու մանկան գըլխի Շուրջը բոլորեց , հօրեղօօր այժքին նորան աւելի հասցայ դարձնելու : Եւ երբ հօրեղօօրս գալով անցնում էր Դաշտերի միջով դէպի իւր արտերն , նըկատեց այնտեղ նստած Գորային , Թողեց հնձուրներն իրենց հուճնն աննն , Իսկ ինքը եկաւ եւ ասաց նորան . « Ո՛ւր էիր երէկ : Ո՛ւմն է երեխան : Եւ ի՞նչ ես շինում դու այստեղ նըստած » : Եւ Գորան գետին ձըգեց աչքերը եւ կամաց նորան պատասխտն տըւաւ . « Վիլեամի որքն է » : « Մի՛Թէ ես քեզ չեմ , Ասաց Այնը , քեզ չեմ արգիլել » : Եւ Գորան նորից ասաց հօրեղօօրս . « Վարուիր ինձ հետ դու ինչպէս կամենաս , Բայց առ երեխան եւ օրհնիր նորան՝ ի սէր նորա որ մեզինց հեռացաւ » : « Շատ լաւ եմ տեսնում , ասաց Այնը , Թէ մի խաղ է դա , որ դու եւ այն կինն Սարքել էք մէկտեղ : Մի՛Թէ իմ պարտըս ես չեմ հասկանում եւ դու այտք է ինձ Խըրատ տաս հիմա : Դու շատ լաւ գիտես , Խօսըս՝ օրէնք էր . չը նայած դորան Ուզում ես ասածս անարգած լինել : Շատ բարի , — կ'առնեմ ես այդ երեխան , Բայց դու այլ ելել՝ աչքիս չերեսա » :

Եւ այս ասելով առաւ փոքրիկին Որ բոլոր ուժով կանջում էր , լալիս . եւ ծաղիկներից փնջած պըսակը Ընկաւ Գորայի ոտքերի առաջ : Զոքեց , գըլուխը ձեռքի մէջ առաւ : Եւ դեռ դաշտերի միջով գալիս էր Հասնում ականջին փոքրիկի ձայնը , Որ կամաց-կամաց քանրի գընում էր Անքան աւելի հեռուից էր լըսուում : Կախեց գըլուխը եւ կըրկին յիշեց Այդ տունը եկած օրը առաջին , Եւ իւր ունեցած խոհերը բոլոր եկան ոչ անցան մըտքովը նորից

Իրար յետեւից : Գրուլին առաւել  
Գետին խոնարհից , լաց եղաւ ճածուկ :  
Եւ հնծուորները հնծում են արտերն ,  
Եւ արեգակը թեքում է գընում ,  
Ու բընուծիւնն ամբողջ պատուում է խաւար  
Քօղով գիշերուայ :

Եւ ելաւ Գօրան

Գնաց Մարեամի տունը մէն-մենակ ,  
Եւ կանգնեց դըւան յէմքի առաջին :  
Տեսաւ Մարեամը , որ իւր գաւազը  
Գօրայի հետ չէ : Փառք տըւեց Աստծուն ,  
Որ իրեն՝ այրուն՝ անտես չէ անում :  
Եւ ասաց Գօրան . « Տօրեղբայրս առաւ  
Երեխային . բայց , թոյլ տուր ինձ , Մարօ ,  
Աւրեմ , աշխատեմ քեզ հետ միասին .  
Ասում է , որ ինձ այլուք երբէք  
Տեսնել չէ ուզում » : Մարեամը նորան  
Պատասխան տըւաւ . « Երբէք այդպէս բան  
Լինել չէ կարող , որ դու իմ ցաւըս  
Առնես քեզ վերայ . այժմ , կարծում եմ ,  
Թէ երեխայիս չեմ թողնիլ նորան ,  
Որ իմ խեղճ որբիս խստասիրտ դարձնէ .  
Եւ նա իւր մօրը անարգէ մի օր .  
Եւ այդ սլատճառով կ'երեմանք միասին ,  
Եւ երեխայիս կ'առնեմ վը բերեմ  
Եւ քեզ համար էլ կ'ազատեմ նորան՝  
Նորից ընդունէ . բայց թէ որ կըրկին  
Քեզ առնել չ'ուզէ , ապա միասին  
Կ'ապրինք մի տան մէջ , կ'աշխատենք մէկտեղ  
Վիւեամի որբի համար , մինչեւ որ  
Նա հասակ կ'առնէ եւ մեզ կը պահէ : »

Եւ այս ասելով , գրկեցին իրար  
Ջերմ համբուրուեցան եւ ելան տընից :  
Ազարակ հասան : Գուռը փակուած էր  
Մղակով միայն . նայեցին , սեսան  
Երեխան Նստած ծնկներին սլապի ,  
Որ նորան գիրկը առած սեղմում էր  
Բագուկների մէջ , կամացուկ զարկում  
Փոքրիկ թամբերին , թեթեւ ապտակում  
Իւր թըշկներին , ինչպէս որ մէկը  
Սիրելիս լինի . եւ երեխան էլ  
Ջըզում էր թամբերն ու լեզու կտրած  
Բլբլում անդադար , քաշում քաշքըշում  
Ժամացոյցից կախ Աւանի ոսկի  
Կըմիքի փուկը , որ փայլ էր տալիս  
Կըրակի առաջ : Ներս մըտան նորբ :  
Եւ երբ երեխան նըկատեց մօրը ,  
Լաց ու աղմուկով մօրն ուզեց գընալ .

Ալանը ծնկից ցած դըրեց մանկանն :  
Եւ Մարեամն ասաց . « Ա՛ , Հա՛յր , — եթէ որ  
Իրաւունք կը տաք ձեզ այդպէս կանչել , —  
Երբէք չեմ եկել ձեզ մօտ մուրալու  
Ոչ ինձ համար եւ ոչ էլ Վիւեամի .  
Եւ ոչ էլ այս խեղճ փոքրիկի համար .  
Բայց , այժմ , տեսէք , եկել եմ միայն  
Գօրայի համար . յետ առէք նորան .  
Սիրում է նա ձեզ , այն էլ զավագանց :  
Հայր , երբ Վիւեամը մտնում էր՝ մտնաւ  
Աննքի հետ հաշտ եւ երբ որ նորան  
Հարցնում էի , նա ինձ ասում էր ,  
Թէ երբէք , երբէք նա չէ զըղջացել  
Որ ինձ կին առաւ , — եւ համբերատար  
Կին էի . իրաւ . — բայց , հայր , շատ անգամ  
Ասում էր նա ինձ՝ ինքն էր անարդար ,  
Որ իւր հօր խօսքը կտորել էր այնպէս .  
« Թող Աստուած օրհնէ նորան , ասում էր ,  
Եւ երանի թէ , երբէք չիմանայ  
Թէ ինչ նեղուծեան օրեր եմ քաշել » :  
Ասաց ու դէմքը շըրքեց ու մտաւ . —  
Ի՛նչ անբաղդ կին եմ : Բայց , Հայր , այժմ թող  
Առնեմ եւ որդուս . վախճանա՛մ թէ նա  
Ձեզ շատ նեղուծիւն , չարքարանք չբուայ .  
Եւ թէ չը լինի իւր հօր յիշատակն  
Անարգել մի օր սովորէ երբէք .  
Առէք Գօրային . եւ թողէք մընայ  
Ամեն , ամեն բան առաջուայ նըման : »

Այսպէս էր ասում Մարեամն , իսկ Գօրան  
Իւր դէմքն էր ճածուկում նորա թիկունքում ,  
Եւ խոր լըռուծիւն տիրեց սենեակում :  
Եւ յանկարծ ծերը հեկեկեկաց մօրմօք .  
Չեծկտաց ծանրը . « Ես եմ անարդարն . —  
Անարդարն ես եմ . ես ինքս եմ , ինքըս  
Որդուս ըսպանել . ինքս եմ ըսպանել , —  
Բայց սիրում էի . սիրում եմ նորան , —  
Ա՛ , իմ թանգագին , իմ անգին որդիս , —  
Ա՛խ , Տէր իմ Աստուած , ների՛ր ինձ ների՛ր :  
Ես եմ անարդարն : — Եկէ՛ք զաւակներս ,  
Համբուրեցէ՛ք ինձ : »

Մարեամն ու Գօրան

Պատեցին իրենց թեւերը ծերի  
Պարանոցի շուրջն եւ համբուրեցին  
Սնվերը ու անվերջ : Եւ ամբողջապէս  
Մարդը իւր խղճի խայթով էր խոցուած .  
Թացքըրած սէրը դարձիւ էր նորան  
Հարիւրապատիկ : Երեք ամբողջ ժամ  
Չեծկտում էր նա Վիւեամի որդու

Վերայ գլխակոր , մտքերը ամբողջ  
Վիճամով տարուած :

Եւ չորսը մէկանդ

Եոյն տան յարկի տակ ապրեցին երկար .  
Եւ երբ տարիներն սափեցին , անցան ,

Մարեամը ուրիշ ամուսին առաւ :  
Իսկ Գորան՝ մարդու չը գընաց երբէք  
Եւ մինչ իւր մահը այդպէս էլ մընաց :  
Քարգմ. ՏՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ  
1907 Յգոստոս 1 .  
Լնդոն



## Նոր Զուղայեցի Հայերուն

ԱՌՆԵՏՈՒՐ ԺԷ. ԳԱՐՈՒՆ



Ամենահին ժամանակներէ հետէ ,  
Հայերն ունեցած են առեւտրական  
ընդարձակ յարաբերութիւններ . Ասու-  
րեստանցիներն ա. Փիւնիկցիներն ա-  
նոնցմէ ապրանք կ'ընդունէին , ձի եւ ջրի կը  
հայթայթէր Հայաստան Տիւրքոսի(1) . Իր գետե-  
րով՝ յարաբերութեան մէջ էր Կասպից ծովուն ,  
Պարսից ծոցին եւ Եւքսինեան Պոնտոսին հետ :  
Իակտրիայէն , հայ վաճառականները կ'երթային  
Հնդկաստան , Սոգդիանայի ճամբով մինչեւ ձե-  
նաց երկրը :

Հայկազանց եւ Արշակունեաց ժամանակ ,  
Հայաստանի վաճառաչաճ քաղաքներն էին Վան ,  
Արմաւիր , Արարատայ մայրաքաղաքը , որու մա-  
սին կը խօսի Պաղտմէոս . Արտայատ , զոր զրա-  
ւելով Գերմանիկոս կոչուեցաւ հայկական , Դուրին  
ուր կը լեցուէին Վրաց եւ Պարսից ապրանքը ,  
Արծնի աւանը որու վաճառականները նշանաւոր  
էին :

Յետոյ , Միջին դարուն , հայկական Կիլի-  
կիան կարեւոր առեւտրական յարաբերութիւն-

ներ ունեցաւ Վենետիկի հանրապետութեան  
հետ Սակայն պէտք է հասնիլ մինչեւ ժէ. դա-  
րու սկիզբը հանդիսատես ըլլալու համար Հայոց  
առեւտրական մեծ շարժման , երբ Մեծն Շահ  
Արքաս հայ հողագործներէն վաճառականներ չի-  
նեց . եւ այդ վաճառականներն եղան աշխարհի  
ամենէն նշանաւոր առեւտուրի մարդկեր(1) :

Շահ Արքաս Ա. նուաճեց Մեծ Հայքը , Ա-  
րարատայ գաւառը , Երեւան , Նախիջևեան (1585),  
սակայն ստիպուած էր շարունակ կռուիլ Թուր-  
քերուն հետ այդ երկիրներուն համար Իմանա-  
լով որ Սուլթան Սելիմ իրեն դէմ մեծ բանակ  
մը կ'ուղարկէր , որոչեց բոլորովին աւերել եր-  
կիրը , որպէս զի Թուրքերը չկարենան երկար  
ատեն մնալ իր սահմանադուրիներուն վրայ եւ  
շարունակել կռիւն . Նախիջևեանի , Երեւանի ,  
Զուղայի , Կարսի շրջականերուն եւ Կարինի  
քնակիչներն առաւ ու այր , կրն , տղայ , ծեր  
ամենքը տարաւ Պարսկաստան , իր ետեւ այրե-  
լով բոլոր գիւղերը եւ բան մը չձգելով Թուր-  
քերուն :

Շահ Արքաս քնակեցուց Հայերը Պարսկաս-  
տանի զանազան մասերուն մէջ . 27,000 ընտա-  
նիք հաստատուեցան Լիվանի գաւառին մէջ ուր  
չերամ կը մշակուի Այս 27,000 ընտանիքէն հա-

(1) Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք և ձեծկովք և  
չորովք լցին զվաճառս քո : Եզեկիւլ իէ. 14 :

(1) Tournefort, Voyage du Levant, tome II. 314.